ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՑ **ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ** ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ ԴՐԱՆՑ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ /2020-21 ՈՒՍՏԱՐԻ/

28.04.2021թ.

2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակում առաջին անգամ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ուսանողների կողմից իրականացվել են հետազոտական աշխատանքներ համապատասխան կրթական ծրագրում առանձնացված դասընթացների շրջանակներում: Հետազոտական աշխատանքներ են իրականացվել 4 ֆակուլտետների 9 կրթական ծրագրերի 16 կուրսերում 26 մասնագիտական դասընթացների շրջանակներում: Հետազոտական աշխատանքներ են ղեկավարել մասնաճյուղի 23 դասախոսներ:

Առաջնորդվելով մասնաճյուղի 2016-20թթ. զարգացման ռազմավարական ծրագրի համապատասխան գործողությունների կատարման անհրաժեշտությամբ (6.1.1, «Վերհանել ուսանողների կրթական և այլ կարիքները և գնահատել նրանց բավարարվածությունը մատուցվող ծառայություններից) մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈՒԱ) բաժինն առաջին կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո, մարտի սկզբին, հարցման միջոցով ուսումնասիրել է հետազոտական աշխատանքների կազմակերպումից, գնահատումից և արդյունքներից ուսանողների և դասախոսների բավարարվածությունը: Հարցումներն անց են կացվել առանձին հարցաշարերով՝ ուսանողների և դասախոսների համար, բայց ներառել են ուսումնասիրության նույն տիրույթները, որպեսզի հնարավորություն լինի նաև իրականացնել համեմատական վերլուծություններ:

Հարցման նպատակն էր.

- ✓ պարզել հետազոտական աշխատանքների ղեկավարների բավարարվածությունը հետազոտական աշխատանքի կազմակերպումից և արդյունքներից,
- ✓ բացահայտել աշխատանքի իրականացման ընթացքում ի հայտ եկած խնդիրները,
- ✓ հավաքագրել առաջարկներ հետազոտական աշխատանքների կազմակերպման և իրականացման բարելավման ուղղությամբ,
- ✓ խթանել դասախոս – բուհ համագործակցությունը:

Հարցումներն իրականացվել են առցանց: Հարցմանումներին մասնակցել են հետազոտական աշխատանք իրականացրած և հարցման հղումը ստացած 16 կուրսերի 179 ուսանողներից **80-ը** (**45%**) և հետազոտական աշխատանքները ղեկավարած 23 դասախոսներից 18-ը (**78%**):

Ամբիոնի անունը	Հետազոտական աշխ. ղեկավարած դասախոսների թիվը	Հարցմանը մասնակցած դասախոսների թիվը
Դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի	4	**2**
Ընդհանուր տնտեսագիտության	3	**3**
Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների	2	**2**
Հայոց լեզվի և գրականության	2	**2**
Հայոց պատմության և հասարակագիտության	2	**2**
Մանկավարժության և հոգեբանության	2	**1**
Տուրիզմի կառավարման և մշակութաբանության	4	**4**
Օտար լեզուների	4	**2**
Ընդամենը՝	**23**	**18**

Ուսանողական հարցման արդյունքները հավաքագրվել և վերլուծվել են առանձին, իսկ դասախոսական հարցման արդյունքները կներկայացնենք ըստ ամբիոնների վերլուծված և ուսանողների պատասխանների հետ համադրված: Այս արդյունքները հնարավորություն կտան ամբիոններին տեսնել իրենց խնդիրները հետազոտական աշխատանքների կազմակերպման, իրականացման և գնահատման գործընթացներում, կատարել անհրաժեշտ հետևություններ, հետագայում բարելավել այդ գործընթացը՝ բարձրացնելով հետազոտական աշխատաքների և՛ կազմակերպման, և նրանց բովանդակայինմակարդակները:

Հարցման արդյունքները հավաքագրվել և վերլուծվել են Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից:

1.Բավարարվածությունը հետազոտական աշխատանքի բովանդակությունից և ռեսուրսներից

Նախ ներկայացնենք, թե ըստ դասախոսների ուսանողները որքանո՞վ էին պատրաստ տրված ժամկետներում հետազոտական աշխատանքներ իրականացնելու և ներկայացնելու: Հարցմանը մասնակցած դասախոսների **67%-ը** նշել է, որ բոլոր ուսանողները ժամանակին իրականացրել և ներկայացրել են իրենց աշխատանքները, իսկ **33%-ը**նշել է, որ հիմնականում ներկայացրել են: Այսն ցուցանիշները վկայում են, որ բոլոր ուսանողներն այնուամենայնիվ պատասխանատվությամբ են մոտեցել և՛ աշխատանքին, և՛ կատարման ժամկետներին, ինչի մասին վկայել են նաև իրենք՝ ուսանողները. ըստ հարցման արդյունքների նրանց **97.5%-ը** կատարել և ներկայացրել է իր հետազոտական աշխատանքը (միայն 2 ուսանող չեն ներկայացրել և պատճառները չեն նշել):

Հետազոտական աշխատանք ղեկավարած դասախոսները նշել են, որ հետազոտական աշխատանքների կատարման համար ուսանողների մոտ զգացվել է փորձի պակաս, մասնավորապես 3-րդ կուրսի ուսանողների մոտ, որոնք նախկինում չեն կատարել կուրսային աշխատանք և նման աշխատանք իրականացնելը նրանց համար նորություն էր, այն էլ մեկ դասընթացի շրաջանակներում:

Մասնավորապես, հետազոտական աշխատանք կատարելուն ուսանողների պատրաստ լինելու վերաբերյալ դասախոսներն արտահայտել են հետևյալ կարծիքները.

- բարձր կուրսերում ուսանողները լիովին պատրաստ էին հետազոտական աշխատանք իրականացնելու համար, ցածր կուրսերում խնդիրները պայմանավորված էին ուսանողների համար աշխատանքի նորություն լինելով (Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոն),
- ուսանողների պատրաստավածությունը բավարար էր (Դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոն),
- որպես առաջին փորձ ընդհանուր առմամբ լավ էր (Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոն),
- նման աշխատանք կատարելը ուսանողների համար նորություն չէր, սակայն պատրաստավածությունը գոհացնող չէր (Հայոց լեզվի և գրականության ամբիոն),
- նման աշխատանք առաջին անգամ իրականացնելու պատճառով պատրաստավածությունը ցածր էր (Մանկավարժության և հոգեբանության ամբիոն)

- ուսանողները ցուցաբերել են պատրաստվածության միջին մակարդակ (Օտար լեզուների ամբիոն),
- կարծիքները հակասական են, բարձր կուրսերը լիովին պատրաստ են նման աշխատանքի իրականացման համար, իսկ ցածր կուրսերում՝ոչ (Տուրիզմի կառավարման և մշակութաբանության),
- բարձր կուրսերում բավարար էր, իսկ ցածր կուրսերում ուսանողները պատրաստ չէին նման աշխատանք կատարելուն (Ընդհանուր տնտեսագիտության ամբիոն)։

Դասախոսների կարծիքներից կարելի է կատարել հետևություն, որ ուսանողների հիմնական մասը, մասնավորապես 3-րդ կուրսի ուսանողները, որոնք կուրսային աշխատանքներ չէին կատարել, պատրաստ չէին նման չափի ինքնուրույն, այն էլ հետազոտական աշխատանք կատարելուն։

Սակայն այստեղից **բխում է խնդիրը**, թե այդ դեպքում հետազոտական բաղադրիչի ամրագրումից հետո ինչպե՞ս է պլանավորել ամբիոնն իր գործունեությունը՝ ուսանողների հետ հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար, արդյո՞ք նրանց հետ տարվել են համապատասխան բացատրական աշխատանքներ, թե դա մնացել է միայն կոնկրետ դասընթացը վարող դասախոսի վրա։ Ենթադրվում է, որ սա մեկ կամ երկու դասախոսների խնդիր չէ, և այստեղ պետք է համագործակցեն ամբիոնի բոլոր դասախոսները, մասնավորապես, դեռ առաջին կուրսից ուսանողների մոտ ձևավորելով ինքնուրույն աշխատելու, գրականությունից օգտվելու, տվյալներ հավաքագրելու և նաև վերլուծելու կարողություններ։

Հարցման շրջանակներում փորձել ենք պարզել, թե հանձնարարված աշխատանքները որքանո՞վ են պարունակել հետազոտություն կատարելու տարրեր։ Եվ դասախոսների, և ուսանողների **60-70%-ը** փաստել է, որ աշխատանքներն ամբողջությամբ հետազոտական են եղել, ինչը վկայում է, որ ղեկավարները բավականին աշխատանք են կատարել թեմաների ընտրության գործում։ Նման աշխատանքների միջոցով ուսանողների մոտ ձևավորվում է տվյալներ ձեռք բերելու, մտածելու, հետազոտելու, վերլուծելու, համադրելու, եզրակացություններ կատարելու կարողություններ, այն ուղղորդում է ինքնուրույն ուսումնասիրել հետազոտվող ոլորտում առկա ժամանակակից գիտական ձեռքբերումները և դրանք ներառել իրենց աշխատանքներում։



Իսկ ահա, հարցմանը մասնակցած հետազոտական աշխատանքներ ղեկավարած 6 դասախոսներ (**33%**) և նման աշխատանք կատարած ու հարցմանը մասնակցած 24 ուսանողներ (**31%**) այդ աշխատանքները համարում են ուղղակի ինքնուրույն աշխատանքներ։ Հակված ենք

ենթադրելու, որ դասախոսներն աշխատանքների թեմաներն ընտրելուց, հավանաբար, հաշվի են առել նաև կոնկրետ կուրսի ուսանողների հնարավորությունները և հանձնարարել են նրանց հասանելի աշխատանքներ: Եթե այս ենթադրությունը ճիշտ է, ապա ամբիոններում պետք է ավելի խորությամբ քննարկվեն հետազոտական աշխատանքների թեմաները, այնուամենայնիվ, դրանք պետք է պարունակեն հետազոտություն կատարելու տարրեր, և մշակել մեխանիզմներ ուսանողներին հնարավորինս նպատակային աջակցելու և ուղղորդելու համար:

Երկու հարցումների արդյունքներով պետք է նշել հետևյալ ընդգծված և գոհացնող ձեռբերումը, այն է, որ դասախոսների **61%-ը** և ուսանողների **71%-ը** փաստում են, որ ուսանողներն ակտիվ մասնակցություն են ունեցել հետազոտական աշխատանքների թեմաների առաջադրման գործում: Սա վկայում է, որ մասնաճյուղն իրականացնում է ուսանողակենտրոն ուսումնառություն:



Թեմաների ընտրությանն ուսանողների ակտիվ մասնակցությունը նպաստել է նաև նրանց մոտիվացիայի բարձրացմանը, ինչի մասին նրանք արտահայտել են՝ պատասխանելով հեռազոտական աշխատանքի թեմայի հետաքրքիր լինելու վերաբերյալ հարցին, նաև այդ ուղղությամբ ապագայում աշխատելու ցանկության վերաբերյալ հարցին: Հարցմանը մասնակցած ուսանողների **70%-ը** (48%+22%) նշել է, որ աշխատանքը հետաքրքիր էր և իր նախասիրությունների շրջանակներում էր, սակայն պետք է նշել, որ ուսանողների **30%-ը**(21%+9%) կատարել է աշխատանքը, քանի որ հանձնարարված է եղել, կամ այն ուղղակի անհետաքրքիր է եղել: Այս արդյունքները համադրելով վերևում ներկայացված դիագրամի տվյալների հետ (**0%+29%**) կարելի է եզրակացնել, որ թեմայի ընտրության գործում ուսանողների մասնակցությունը երևի արդարացված է,հետևաբար այս ուղղությամբ ամբիոնները լուրջ աշխատանքներ ունեն կատարելու կապված թեմաների արդիականության, կիրառելիության հետ:

Նշենք, որ հարցմանը մասնակցած 16 դասխոսներ նշել են (2-ը չեն պատասխանել), որ իրենց հանձնարարած հետազոտական աշխատանքների թեմաներն ամբողջությամբ փախկապակցված են եղել իրենց դասընթացի բովանդակության հետ. այդպես են կարծում նաև ուսանողների **95%-ը** նշելով, որ դրանք կամ լիովին փոխկապակցված էին դասընթացի հետ, կամ հիմնականում դասընթացի ընթացքում ուսումնասիրված թեմաներն էին, կամ նրան մոտ թեմաներ:

Հետազոտական աշխատանքի իրականացման համար նյութերի և աղբյուրների ձեռք բերման հիմնական կիրառվող միջոցը ուսանողների համար եղել է համացանցը՝ **92%**, այդ կարծիքին են դասախոսների **94%-ը**, այսինքն ուսանողները հիմնականում օգտվել են էլեկտրոնային գրադարաններից և պաշտոնական տվյալներ պարունակող կայքէջերից: Ըստ հարցման արդյունքների դասախոսների **53%-ը** փաստել է, որ աշխատանքի իրականացման համար

ուսանողներն օգտվել են մասնաճյուղի գրադարանից, սակայն ուսանողների միայն **19%-ն** է այդ կարծիքին, այսինքն կամ գրադարանում այդ նյութերը չեն եղել, կամ ուղղակի ուսանողները չեն օգտվել մասնաճյուղի գրադարանի ռեսուրսներից: Հաշվի առնելով հետազոտական աշխատանքի նեղ մասնագիտական լինելու փաստը, նաև աշխատանքի կատարման համար անհրաժեշտ տվյալների լայն շրջանակը, նաև գիտության առաջընթացի ժամանակակից տեմպը, մասնաճյուղի գրադարանի նյութերից օգտվելու ցածր ցուցանիշը միգուցե կարելի է համարել արդարացված:Դասախոսների և ուսանողների կարծիքները տարբերվում են նաև դասախոսի կողմից նյութերի տրամադրման հարցում. դասախոսների **76%-ը** վկայել է, որ ուսանողներին տրամադրել է անհրաժեշտ նյութեր, այդ կարծիքին են միայն ուսանողների **36%-ը**:

Այս արդյունքները լրացուցիչ մտածելու տեղիք են տալիս, կարելի է ենթադրել, որ <u>ուսանողները չեն պատկերացնում հետազոտական աշխատանք կատարելու գործում իրենց ջանքերի չափն ու ծավալը, այլ հակված են ավելի հեշտ ճանապարհով հասնել հարցի լուծմանը:</u> Ակնհայտ է, որ նման աշխատանքներ հանձնարարվում են, որպեսզի ուսանողներն անհրաժեշտ տվյալներ ձեռք բերելու և վերլուծելու համարցուցաբերեն նախաձեռնություն և ստեղծագործական մոտեցում, նրանց մոտ ձևավորվեն գիտական տվյալների հետ աշխատելու ունակություններ: Այսինքն, այստեղ նույնպես ամբիոնները, և նաև դասախոսներն իրենք բավականաչափ խնդիրներ ունեն, մասնավորապես, ուսանողների հետ տանել բացատրական և մեթոդաբանական աշխատանք, ուղղորդել և աջակցել նրանց, սովորեցնել ճիշտ աշխատել և սեփական ջանքերով հասնել արդյունքի:

Հարցման շրջանակներում ցանկացել ենք պարզել, թե հետազոտական աշխատանքների իրականացումն **ի՞նչ տվեց ուսանողներին**՝ համադրելով և՛ ուսանողների, և՛ դասախոսների պատասխանները: Դրա համար հարցի ընտրովի պատասխաններում ներառված էին կրթական վերջնարդյունքներ, մասնավորապես, կատարված աշխատանքը ուսանողին արդյո՞ք տվել է նոր գիտելիքներ, գործնական և մասնագիտական կարողություններ, վերլուծելու կարողություններ, դատողություններ ու եզրակացություններ կատարելու և ինքնուրույն աշխատելու ունակություններ, իսկ պատասխանների վերլուծությունը հնարավորություն կտար պարզելու, թե աշխատանքի ավարտին նշված վերջնարդյունքներից որ մասն են ձեռք բերել ուսանողները, և ինչ կարծիքի են այդ մասին ղեկավարները:

Ուսանողների պատասխաններից ստացել ենք, որ նրանց **53-ից 70%-ը** հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում ձեռք է բերել նշված վերջնարդյունքները, ինչը հուսադրող է և վկայում է հետազոտական աշխատանքների միջոցով ուսումնառության կազմակերպման նոր ձևի նպատակային և արդարացված լինելը:

Ուրախալի է, որ որոշ վերջնարդյունքների ձեռքբերման հարցում ուսանողների և դասախոսների կարծիքները համընկնում են, օրինակ մասնագիտական հմտությունների (համապատասխանաբար՝ **53%, 50%**), վերլուծելու կարողությունների (**70%, 67%):**

Սակայն դասախոսների կարծիքները մնացած վերջնարդյունքների ձեռք բերելու հարցում <u>տարբերվում են ուսանողների կարծիքներից</u>, և ընդհանուր առմամբ ավելի բարձր են, քան ուսանողներինը,մասնավորապես.

- ✓ դասախոսների միայն **33%-ն** է գտնումէ, որ այդ աշխատանքների կատարման ընթացքում ուսանողները ձեռք են բերել նոր գիտելիքներ, իսկ այդ կարծիքին են ուսանողների **64%-ը**, այսինքն

<u>այստեղ խնդիր կա</u>, այն է, որ կամ դասախոսները չեն կարողացել բացահայտել, որ ուսանողների գիտելիքներն այդ աշխատանքների իրականացման ընթացքում ավելացել են, կամ իրենց հանձնարարած թեմաները սահմանափակվում են դասընթացով և նոր գիտելիքի խնդիր չկա, կամ թեմաներն ուղղորդել են ուսանողներին ուսումնասիրել և ձեռք բերել անհրաժեշտ նոր գիտելիքներ, սակայն ուսանողների մոտ դա չի ստացվել,

- ✓ դասախոսների **67%-ը** (18-ից 12-ը), իսկ ուսանողների միայն **56%-ը** (77-ից 43-ը) գտնում է, որ հետազոտական աշխատանքն ավելացրել է ուսանողների գործնական կարողությունները,
- ✓ դասախոսների **78%-ը** (18-ից 14-ը), իսկ ուսանողների **66%-ը** (77-ից 51-ը) նշել են, որ ուսանողների մոտ ձևավորվել են ինքնուրույն աշխատելու ունակություններ,
- ✓ դասախոսների **72%-ը** (18-ից 13-ը), իսկ ուսանողների **61%-ը** (77-ից 47-ը) նշել են, որ ուսանողները ձեռք են բերել դատողություններ և եզրակացություններ կատարելու ունակություններ:



Այս արդյունքները վկայում են, որ <u>ուսանողները կամ ճիշ՛տ չեն կարողացել գնահատել իրենց ձեռքբերումները, կամ դասախոսներն ուղղակի վերապահումով են գնահատել, կամ լավ ուսանողները կատարել են աշխատանքներն ու գոհ են իրենց ձեռքբերումներից, իսկ համեմատաբար թույլ սովորող ուսանողները կատարել են իրենց հնարավորությունների սահմաններում և նշել այն, ինչ կարողացել են ձեռք բերել</u>: Այսինքն, ամբիոններն այս արդյունքների հիման վրա, հավանաբար,հաջորդ իրականացման ժամանակ կմշակեն նոր մոտեցումներ, համապատասխան աշխատանքներ կտանեն ուսանողների հետ, որպեսզի առավել շատ ուսանողներ լիարժեք բավարարված լինել իրենց ձեռքբերումներից:

Եվ որպես այս մտքի շարունակություն փորձել ենք պարզել, թե իրականացման տեսանկյունից ի՞նչ չափով էր բարդ հանձնարարված հետազոտական աշխատանքը: Դիագրամում ներկայացված են դասախոսների և ուսանողների կարծիքներն այդ հարցի վերաբերյալ:



Այս հարցում նույնպես ղեկավարների և ուսանողների կարծիքները տարբերվում են: Դասախոսների **72%-ը** փաստել է, որ հանձնարարված աշխատանքը կատարելու համար ուսանողները ստիպված էին շատ նոր բաներ սովորել, իսկ ահա ուսանողների գրեթե **65%-ն** այդպես չի մտածում և ընդհակառակը, ուսանողների **60%-ի** համար հետազոտական աշխատանքի կատարումը բարդություն չի ներկայացրել և նրանք հեշտությամբ են կատարել աշխատանքը, ինչին համամիտ է միայն ղեկավարների **22%-ը**: Այսինքն, այստեղ նույնպես <u>աշխատանքի իրականացման բարդության գաղափարը ուսանողների մոտ միանշանակ չի ընկալվել, և կատարել են այն ինչ կարողացել են, և չեն տեսել այն, ինչ պետք էր կատարել</u>: Այստեղ նույնպես խնդիր կա և, հավանաբար պահանջվում է աշխատանքների իրականացման պայմանների ու չափանիշների հստակեցում:

<u>**Ամփոփելով**</u> այս բաժնում ներկայացված արդյունքները, կարող ենք նշել, որ.

- դասախոսները հիմնականում բավարարված են ուսանողների ակտիվությունից և հետազոտական աշխատանքի կազմակերպման և իրականացման գործընթացի նկատմամբ նրանց հետաքրքրվածությունից և ներգրավվածությունից,
- թեմաները եղել են արդիական և ըստ ուսանողների և դասախոսների մեծամասնության պարունակել են հետազոտական բաղադիչներ,
- աշխատանքները եղել են ուսանողների կողմից հաղթահարելի և ապահովել են մասնագիտական նոր գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռք բերում, զարգացրել են նրանց մոտ տվյալներ հավաքագրելու, վերլուծելու, մտածելու, դատողություններ անելու կարողություններ:

Սակայն այս նշվածներին զուգահեռ, այնուամենայնիվ <u>**կան խնդիրներ**</u>, որոնց մասին նշել ենք վերլուծության ընթացքում, և որոնց ամբիոններում պետք է ուշադրություն դարձնեն:

2.Բավարարվածությունը հետազոտական աշխատանքի ղեկավարի աջակցությունից

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսանողների համար (համենայն դեպս մեծ մասի համար) հետազոտական աշխատանք կատարելը ուսումնառության նոր մոտեցում է, ակնհայտ է այն իրականացնելու համար ակնկալվում էր ղեկավարների բազմաբովանդակ աջակցությունն ուսանողներին՝ աշխատանքներն ըստ պահանջների մասնագիտորեն ճիշտ, համապատասխան վերլուծություններով և արդյունքներով ներկայացնելու համար: Ուսանողների աշխատանքների

հաջողվածությունը պայմանավորված է նաև նրանց ղեկավարների սրտացավ և հետևողական մասնակցությամբ: Վստահ ենք, որ մեր դասախոսներն իսկապես ակտիվ աջակցել են ուսանողներին:

Հարցման շրջանակներում ցանկացել ենք պարզել, թե ինչպե՞ս են դասախոսները գնահատում իրենց աջակցությունը ուսանողներին թեմայի ընտրության հարցում, հետազոտական մեթոդների ընտրության գործում, վերլուծությունների կատարման ժամանակ ու գրականության և մեթոդական նյութերի ընտրության գործում, և նույն հարցերի շրջանակներում պարզել ուսանողների բավարարվածությունը դասախոսների աջակցությունից:

Դիագրամում ներկայացված են հետազոտական աշխատանքի իրականացման գործում ղեկավարների աջակցության վերաբերյալ դասախոսների և ուսանողների կարծիքները՝ 5 միավորանոց սանդղակով (ներկայացված են միջին գնահատականները):



Ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ ղեկավարների և ուսանողների կարծիքները մի շարք հարցերում չեն համընկնում, իսկ ընդհանուր առմամբ ուսանողների տված գնահատականների միջինը բոլոր գործընթացների համար կայուն փոքր է 4-ից (3.7-3.9): Նշենք, որ դասախոսներն իրենք էլ իրենց աջակցությունն առանձնապես բարձր չեն գնահատել (3.8-4.3): Նույնիսկ, հայոց լեզվի և գրականության, հայոց պատմության և հասարակիգության, դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնների դասախոսներն իրենց աջակցությունը ուսանողներին գնահատել են միջինը 3 միավորից ցածր, այդ արդյունքները մանրամասն ներկայացված են դասախոսական հարցման արդյունքները ներկայացնող ֆայլում:

Ուշադրություն. Այս հարցի շուրջ ուսանողների տված գնահատականներն ըստ ֆակուլտետների և դրանց վերլուծությունը տրված է առանձին հետազոտական աշխատանքի իրականացման և գնահատման վերաբերյալ ուսանողական հարցման արդյունքներում և առանձին իրականացված վերլուծության մեջ:

Այս տվյալներից մեզ համար նախ ուշադրության արժանի էր **թեմայի ընտրության գործում** դասախոսների աջակցությանն ուսանողների տված ցածր գնահատականը (միջին գնահատականը՝ **3.8**), որովհետև նրանց **71%-ը** նշել էր, որ մասնակցել է թեմաների ընտրությանը: Այսինքն, այստեղ

հավանաբար ավելի բովանդակային ու խորը խնդիր կա, ինչը պետք է պարզեն և՛ իրենք ղեկավարները, և՛ ամբիոնները, հասկանալու համար, թե ի՞նչ են հասկանում ուսանողները թեմայի ընտրության և դրանում մասնակցություն ունենալու գործընթացի տակ, ինչի կապակցությամբ միգուցե առաջել են հակասությունները:

Ինչպես ցույց են տալիս արդյունքները, ուսանողները բավարարված չեն նաև **հետազոտական մեթոդների ընտրության գործում** դասախոսների աջակցությունից (միջին գնահատականը՝ **3.8**): Սա այն կարևորագույն գործընթացն է, որում ամբիոնները պետք է ցուցաբերեն ավելի ակտիվ մասնակցություն: Քանի որ ուսանողները 2-րդ կամ 3-րդ կուրսերում, այնուամենայնիվ, սկսում են հետազոտական աշխատանք կատարել առաջին անգամ, ապա նրանց պետք է ծանոթացնել իրենց աշխատանքների իրականացման ժամանակ անհրաժեշտ և կիրառելի հետազոտական մեթոդներին, կողմնորոշել և աջակցել:

Հետազոտական աշխատանքների ղեկավարներն իրենց աջակցությունն ուսանողներին մեթոդների ընտրության գործում գնահատել են միջինը **4.2 միավոր,** որն ավելի հուսադրող է և վկայում է, որ նրանք ապահովել են ակնկալվող անհրաժեշտ աջակցությունը:

Նշենք, որ հետազոտական մեթոդների և մեթոդաբանության վերաբերյալ ուսանողների հետ տարված աշխատանքների և կարծիքների մասին ներկայացված է այս վերլուծության 4-րդ բաժնում:

Նկատենք, որ դասախոսներն իրենց աջակցությունը վերլուծությունների կատարման և արդյունքների ձևակերպման ժամանակ մյուս գործընթացների համեմատ գնահատել են ցածր (միջին գնահատականը՝ **3.8, 3.9**), նույնն իրենց գնահատականներով փաստել են նաև ուսանողները: Այսինքն, դասախոսները գտնում են, որ քիչ են աջակցել, սակայն հարց է առաջանում՝ պե՞տք էր աջակցել, դա պարտադի՞ր էր, իսկ իրենք թերացել են այդ գործում, թե՞ ուղղակի ցանկացել են, որ ուսանողներն ինքնուրույն հաղթահարեն, կատարեն վերլուծություններ, ձևակերպեն իրենց ձեռք բերած արդյունքները, դրանով նպաստելով նրանց մոտ համապատասխան մասնագիտական որակների զարգացմանը, թե դա հետևանք է մեկ դասընթացի շրջանակներում հետազոտական աշխատանքների կազմակերպման գործում իրենց մեծ ծանրաբեռնվածության: Բայց հաշվի առնելով այն փաստը, որ ուսանողները նույնպես բավարարված չեն, ապա այստեղ պարզաբանումների խնդիր կա:

Սա իհարկե ամբիոններում քննարկելու նյութ է, որպեսզի պարզաբանվի, թե այդ գործընթացներում ի՞նչ չափով, ինչպե՞ս և որքա՞ն պետք է աջակցել, միգուցե պետք է մշակվեն համապատասխան չափանիշներ:

Ամփոփելով այս բաժնի արդյունքները տպավորություն է ստեղծվում, որ դասախոսների կողմից աջակցությունից ուսանողների ակնկալիքները եղել են ավելին: Սակայն խնդիրն այլ կողմից նայելու դեպքում, հնարավոր է, որ ուսանողների պատկերացումները ղեկավարի աշխատանքի վերաբերյալ եղել են սխալ, քանի որ հետազոտական աշխատանքի հիմնական բեռնվածությունը պետք է կրի ուսանողը: Ղեկավարի գործառույթը կարելի է համարել խորհրդատվական:

Ցանկացած պարագայում այս գործընթացում պարզաբանման ենթակա հարցեր և լուծելու ենթակա խնդիրներ կան, մասնավորապես, ղեկավարների կողմից աջակցության չափաբաժնին ուսանողների տեղեկացվածության, իրազեկվածության վերաբերյալ:

Ուշադրությունը հրավիրենք այն փաստի վրա, որ աջակցության գործընթացում առավել և ընդգրկված բավարարված չեն բնական գիտությունների և կիրառական արվեստի ֆակուլտետներում:

3.Բավարարվածությունը ուսանողի կատարած աշխատանքից

Կարևորելով ուսանողի կողմից իր ինքնուրույն կատարած աշխատանքը գնահատելու արդիական խնդիրը և ուսանողների ինքնուրույն աշխատելու ունակությունների զարգացման խնդիրը, հարցման շրջանակներում փորձել ենք պարզել դասախոսների բավարարվածությունը հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում ուսանողների ցուցաբերած ինքնուրույնության աստիճանից: Մասնավորապես, փորձել ենք պարզել, թե ըստ դասախոսների ուսանողների մոտ որքանով է ստացվել ինքնուրույն պլանավորել հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքը, ձևակերպել աշխատանքի նպատակն ու խնդիրները, գնահատել թեմայի արդիականությունն ու նշանակությունը, հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվություն, օգտվել անհրաժեշտ գրականությունից, ներկայացնել ձեռք բերած արդյունքները, ձևակերպել եզրակացությունը և ներկայացնել աշխատանքը:

Հարցման միջոցով հավաքագրված և մշակված արդյունքները ցույց են տալիս, որ





դասախոսներն առանձնապես բավարարված չեն ուսանողների ինքնուրույն աշխատելու որակներից և նրանց տված միջին գնահատականները **ցածր են 4 միավորից**, ընդ որում ուսումնասիրվող հարցերից կեսից ավելիի շրջանակներում այդ գնահատականները նույնիսկ **չեն գերազանցում 3.6-ին:**

Նույն հարցերի վերաբերյալ ուսանողների կարծիքները կայուն ցածր են և արտահայտված են **3.9-4.1** միջին գնահատականներով: Այսինքն, դա նշանակում է, որ ուսանողներն իրենց անվստահ են զգացել հետազոտական աշխատանքի իրականացման ժամանակ՝ զգալով, որ իրենց մոտ

աշխատանքն ինքնուրույն կատարել չի ստացվել: Նշենք, որ հիմնականում իրենց ինքնուրույնությունից բավարարված չեն բնական գիտությունների ֆակուլտետի (միջին գնահատականները՝ **3.4-3.7**) և կիրառական արվեստի ֆակուլտետի (միջին գնահատականները՝ **3.6-3.8**) ուսանողները, որոնց ցածր գնահատականներն ազդել են ընդհանուր միջին գնահատականի վրա: Հուսադրող է, որ հումանիտար գիտությունների ֆակուլտետի (գնահատականները՝ **4.1-4.3**) և տնտեսագիտության ֆակուլտետի (գնահատականները՝ **3.9-4.1**) ուսանողներն ավելի վստահ են եղել իրենց հնարավորությունների և ինքնուրույն հաղթահարելու իրենց ուժերի վրա:

Այժմ ներկայացնենք, թե հետազոտական աշխատանքը կատարելու համար տրամադրված ժամանակահատվածը ուսանողի համար արդյո՞ք բավարար էր: Այս հարցում նույնպես դասախոսների և ուսանողների կարծիքները հիմնակնում տարբերվում են:



Հարցման արդյունքները, որոնք ամփոփ ներկայացված են դիագրամում, ցույց են տալիս, որ դասախոսների **67%-ը** (28+22+17), իսկ ուսանողների **89%-ը** (47+32+10) գտնում է, որ տրամադրված ժամանակահատվածը բավարար էր, ուղղակի որոշ դեպքերում ուսանողներից ծանրաբեռնված աշխատանք է պահանջվել, իսկ որոշ ուսանողներ ուղղակի ճիշտ չեն պլանավորել իրենց ժամանակը: Հարկ է նշել, որ դասախոսների **33%-ը** (6 դասախոս) փաստում է, որ իր հանձնարարած աշխատանքը ծավալուն էր և տրամադրված ժամանակահատվածը բավարար չէր (այդ կարծիքին են 5 ուսանող՝ 6%-ը): Այստեղ հարց է առաջանում, արդյո՞ք դասախոսն ինքը չպետք է պլանավորի իր կողմից հանձնարարվող աշխատանքի ծավալը՝ հաշվի առնելով տրամադրված ժամանակը, իրականացման բարդությունը, ուսանողների հնարավորությունները և այլն, նաև այն հանգամանքը, որ ուսանողները նույն կիսամյակում կարող են ունենալ երկու հետազոտական աշխատանք, ինչը ժամանակի առումով դժվարացնում է դրանց իրականացումը (այդ մասին ուսանողները նշել էին բաց հարցերում):

Ամփոփելով այս բաժնի արդյունքները և ներկայացված դիագրամների տվյալները նկատում ենք, որ դեռ առաջին կուրսից սկսած բոլոր դասախոսները **խնդիր ունեն** ուսումնառության

ընթացքում ուսանողների ինքնուրույն աշխատելու տարբեր որակները բարելավելու, զարգացնելու ուղղությամբ:

Այդ արդյունքները ցույց են տալիս, որ

- ամբիոններում պետք է վերլուծվեն դասախոսական և ուսանողական հարցման արդյունքները և ուշադրություն դարձվեն ուսանողի ինքնուրույնության դրսևորման տարբեր ասպեկտներին և դրանց անբավարարության պատճառներին,
- ուսանողների և ղեկավարների գնահատականների տարբերությունը շտկելու համար, կարելի է ուսանողներին հստակ ներկայացնել իրենց առջև դրված խնդիրները և ղեկավարի առջև դրված խնդիրները,
- ամբիոններում պետք է քննարկվեն հանձնարարվող թեմաները, հստակեցվեն ծավալները՝ արտահայտված հստակ պահանջներով, որպեսզի ուսանողները կարողանան իրականացնել տրված ժամանակահատվածում:

4. Բավարարվածությունը հետազոտական աշխատանքի կազմակերպումից

Ուսանողի ուսումնառության արդյունավետ կազմակերպման գործում կարևոր է ցանկացած գործընթացի իրականացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը: Այդ գործընթացում իր տեղն է ամրագրել նաև հետազոտական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը և նրանում ի հայտ եկող ցանկացած թերություն, կամ իրականացման տեսանկյունից բարդ ու անհաղթահարելի թվացող ցանկացած խնդիր կարող է նվազեցնել ուսանողի մոտիվացիան:

Հետևաբար, հարցումը պետք է կարողանար պարզել նաև այդ գործընթացի իրականացման վիճակը, բացահայտել հանդիպած խնդիրները, որոնց լուծումներն ապագայում կբարելավեն հետազոտական աշխատանքների իրականացման որակը:

Հարցման շրջանակներում փորձել ենք պարզել ուսանողների և ղեկավարների բավարարվածությունը հետազոտական աշխատանքի կազմակերպումից, պարզել, թե որքանո՞վ էր ճիշտ ընտրված աշխատանքը կատարելու համար հատկացված ժամանակը և աշխատանքի կազմակերպման ձևը, արդյո՞ք ուսանողները ծանոթ են եղել հետազոտական աշխատանքի իրականացման մեթոդաբանությանը:



Դիագրամը ցույց է տալիս, որ հետազոտական աշխատանքի կազմակերպման համար դասախոսների **61%-ը** ընտրել է աշխատանքների հանձնարարման անհատական ձևը, իսկ **17%-ը՝** խմբային:

Եվ ահա դասախոսների **78%-ը** (14 դասախոս) և ուսանողների գրեթե **85%-ը** նշել է, որ հետազոտական աշխատանքի կազմակերպման ընտրված ձևը կատարման համար արդյունավետ է եղել: Այսինքն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխատանքների հիմնական մասն անհատական հանձնարարված աշխատանքներ են եղել, և ուսանողները բավարարված են եղել կազմակերպման այդ ձևից, ապա կարելի է մտածել, որ մեր ուսանողների մոտ ձևավորված է ավելի շատ առանձին աշխատելու ունակություններ, և նրանք սովոր չեն խմբային աշխատանք կատարելուն, որը նրանց ապագայում կապահովի կոլեկտիվում արդյունավետ ներգրավվելու և թիմով աշխատելու կարողություններ:



Սա մենք առաջ ենք քաշում **<u>որպես խնդիր</u>**, մտածելով, որ սա հետազոտական աշխատանքի իրականացման առաջին փորձն է, և առաջարկում ենք ամբիոններում հետազոտական բաղադրիչով դասընթացների շրջանակներում իրականացվող հետազոտական աշխատանքների համար մշակվեն այնպիսի մոտեցումներ, որ նույն ուսանողն իր ուսումնառության ընթացքում կատարվելիք 5-6 աշխատանքների իրականացման ժամանակ հնարավորություն ունենա աշխատելու և՛ անհատական, և՛ խմբային:

Ինչպես նշեցինք վերևում, ուսանողները խնդիր են ունեցել անհրաժեշտ նյութի կամ ոլորտի ուսումնասիրության համար համապատասխան հետազոտական մեթոդի ընտրության, նաև հավաքագրված տվյալների հիման վրա վերլուծություններ և եզրակացություններ կատարելու հարցում:

Հարցման միջոցով փորձել ենք պարզել, թե ինչպե՞ս են դասախոսներն ուսանողներին ծանոթացրել հետազոտություն կատարելու մեթոդաբանությանը:



Ներկայացված տվյալները բացահայտում են, որ դասախոսների **61%-ը** դրա համար կազմակերպել է առանձին հանդիպումներ, **17%-ն** ուղղակի պատասխանել է ուսանողների հարցերին, իսկ **22%-ը** փաստել է, որ դասընթացի շրջանակներում է անդրադարձ եղել հետազոտության մեթոդներին:

Ուսանողների **77%-ը** նշել է, որ դասախոսներն իրենց ծանոթացրել են հետազոտություն կատարելու մեթոդաբանությանը, **19%-ը** գտնում է, որ դա մասամբ է կատարվել, իսկ 4%-ը (3 ուսանող) վկայում է, որ իրեն չեն ծանոթացրել:

Այստեղ իհարկե ուրախալի է, որ դասախոսներն իրենց պարտականությունները կատարել են 100%-ով՝ ուսանողներին ներկայացնելով հետազոտական աշխատանք կատարելու սկզբունքներին ու մեթոդներին, և որ ուսանողները դա փաստում են ու ընդունում, որ իրենք տեղեկացված են եղել:

Ամփոփելով այս բաժինը կարելի է եզրակացնել, որ դասախոսների կողմից հետազոտական աշխատանքի իրականացման համար ընտրված ձևերը եղել են արդյունավետ և կիրառելի:

Այստեղ հիմնական խնդիրը կապված է հետազոտություն կատարելու մեթոդաբանության հետ, որից ուսանողների լիարժեք տեղեկացվածության համար ամբիոններում պետք է մշակեն հատուկ մոտեցումներ. պետք է ուսանողի կողմից առաջին հետազոտական աշխատանքի իրականացումից առաջ կազմակերպել հատուկ քննարկումներ, տանել նրանց հետ բացատրական աշխատանքներ, ծանոթացնել նման աշխատանքներ կատարելու սկզբունքներին, առանձնահատկություններին և այլն:

5.Բավարարվածությունը հետազոտական աշխատանքի գնահատումից

Ուսանողի կատարած ցանկացած աշխատանքի գնահատումը միայն ցուցանիշ չէ, այլ այդ աշխատանքի օբյեկտիվ և ճիշտ գնահատումը դա ուսանողի մոտիվացիայի կարևորագույն պայմաններից մեկն է: Գնահատման օբյեկտիվության և իրենց գնահատականներից ուանողների բավարարվածության համար անհրաժեշտ է, որ ուսանողները նախապես տեղեկացված լինեն գնահատման չափանիշներից: Իհարկե գնահատման գործող չափանիշները սովորաբար հրապարակվում և ուսանողին հասանելի են դառնում մասնաճյուղային և ֆակուլտետային բոլոր հարթակներում, սակայն այն իր բովանդակային առանձնահատկություններով ուսանողին ընդունելի և ընկալելի է դառնում, երբ այն մանրամասն ներկայացնում է անմիջապես դասավանդող դասախոսը:

Այդ տեսանկյունից բացառություն չէ նաև հետազոտական բաղադրիչով դասընթացի գնահատումը, որը մյուս դասընթացներից տարբերվում է իր յուրահատկությամբ. ուսանողի գնահատականի մեջ իր մասնաբաժինն ունի նաև հետազոտական աշխատանքի համար ստացած միավորը: Նշենք, որ հետազոտական աշխատանքի գնահատումն իրականացվում է ըստ մասնաճյուղում գործող կարգի, իսկ գնահատման միավորի մեջ իրենց արտահայտությունն են գտնում հետազոտական աշխատանք կատարելու ուսանողի կարողությունները բացահայտող չափանիշները:

Նախ հարցման միջոցով փորձել ենք պարզել, թե երբ են դասախոսներն ուսանողներին ներկայացրել հետազոտական աշխատանքի գնահատման չափանիշները:

Դասախոսների **56%-ը** նշել է, որ ուսանողներին գնահատման չափանիշներին ծանոթացրել է կիսամյակի սկզբում, այսինքն աշխատանքն սկսելուց առաջ, իսկ **44%-ը** նշել է, որ դա կատարել է ընթացքում: Իսկապես, ուսանողների **79%-ը** փաստում է, որ չափանիշների մասին տեղեկացրել է դասախոսը, նրանց **12%-ը** գնահատման չափանիշներին ծանոթացել է մասնաճյուղի կայքից, որը

խոսում է նրանց հետաքրքրվածության մասին, սակայն ցավալի է, որ ունենք ուսանողներ, որոնք ընդհանրապես ծանոթ չեն եղել դրանց:

Հետևյալ դիագրամում ներկայացված են դասախոսների և ուսանողների կարծիքները հետազոտական աշխատանքի գնահատման չափանիշների վերաբերյալ:



Հետաքրքիր է, որ ուսանողների **52%-ի** կարծիքով գնահատման չափանիշները ճիշտ են ընտրված, այդպես մտածում է դասախոսների միայն **44%-ը**, իսկ դա նշանակում է, որ դասախոսները (56%-ը) ընտրված գնահատման չափանիշների հետ կապված **խնդիրների են** հանդիպել հենց առաջին հետազոտական աշխատանքի իրականացման ժամանակ: Եթե հաշվի առնենք, որ գործող կարգն ընդունվել է որոշակի քննարկումներից հետո, այնուամենայնիվ, և՛ դասախոսները, և՛ ուսանողներն այդ չափանիշների ճիշտ լինելու հետ կապված մտորումներ ունեն:

Սա նշանակում է, որ ամբիոններում պետք է ևս մեկ անգամ քննարկվեն հետազոտական աշխատանքի գնահատման ընտրված չափանիշները, ապա բոլոր ամբիոնների առաջարկները ներկայացվեն մասնաճյուղի կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման և մասնագիտական կրթության որակի ապահովման բաժիններ, որտեղ քննարկումներից հետո ամբիոնների առաջարկների հիման վրա կներկայացվեն փոփոխություններ կարգում:

Առավել հետաքրքիր են հետազոտական աշխատանքների համար ուսանողների պատասխանների և ստացած գնահատականների համապատասխանության վերաբերյալ դասախոսների և ուսանողների կարծիքները:

Արդյունքներից երևում է, որ դասախոսների **44%-ը** համապատասխան է գնահատել, իսկ **56%-ը** խրախուսման նպատակով նույնիսկ բարձր է գնահատել ուսանողների պատասխանները, այդ կարծիքին են նաև ուսանողների ճնշող մեծամասնությունը, նրանց **88%-ը** բավարարված է իր ստացած գնահատականից, սակայն **12%-ի** կարծիքով իր ստացած գնահատականը չի



համապատասխանում կատարած աշխատանքին: Ճիշտ է դա մեծ թիվ չի կազմում, սակայն եթե չբավարարված ուսանող կա, ուրեմն դասախոսն այստեղ խնդիր ունի:

Այստեղ **կարող ենք առաջարկել** ղեկավարներին և ամբիոնների վարիչներին հանդիպել ուսանողների հետ, պարզաբանել անհամապատասխանության օբյեկտիվ, սուբյեկտիվ և այլ պատճառները, եթե այդպիսիք գոյություն ունեն, գտնել դրանց լուծման մեխանիզմներ: Եվ եթե դրանք ոչ ճիշտ ընտրված չափանիշների հետևանք են, ապա քայլեր ձեռնարկել դրանք ճշտելու ուղղությամբ:

Ստորև տեղադրված դիագրամում ներկայացված են այն արդյունքները, որոնք ցույց են տալիս ըստ որ չափանիշների են գնահատվել ուսանողների աշխատանքները: Դրանք ներառում են աշխատանքում ուսանողների դրսևորած ինքնուրույնությունը, հավաքագրված տվյալները, արդյունքների հիմնավորվածությունը և հավաստիությունը, աշխատանքում ներկայացված վերլուծությունները, եզրակացությունները և ուսանողի կողմից աշխատանքի ներկայացումը: Դիագրամում ներկայացված դասախոսների և ուսանողների արդյունքները վկայում են, որ աշխատանքների գնահատման ժամանակ հաշվի են առնվել և գնահատվել նշված բոլոր չափանիշները:



Սակայն հատկապես ի՞նչն է բարձր գնահատվել յուրաքանչյուր աշխատանքի, կամ ուսանողի դեպքում, տեսնում ենք, որ թե՛ դասախոսների, և թե՛ ուսանողների կարծիքով դա ուսանողների ինքնուրույնությունն է (չնայած վերևում ուսանողների իքնուրույն աշխատելու ունակությունները դասախոսները ցածր են գնահատել) և աշխատանքի ներկայացումը, ընդ որում դասախոսների կարծիքներն ավելի բարձր են:

Ընդհանուր առմամբ ըստ բոլոր չափանիշների դասախոսներն ու ուսանողները համակարծիք են: Միայն հավաքագրված տվյալների առումով դասախոսները բավարարված չեն եղել, բայց դրա վրա իր ազդեցությունն է ունեցել համավարակային իրավիճակը, որը սահմանափակել է ուսանողների ազատ գործունեությունը, կազմակերպություններից և դպրոցներից տվյալներ վերցնելու հնարավորությունները: Նշենք, որ այդ մասին իրենք ուսանողները նշել են բաց հարցերում, այդ փաստը ներկայացնելով որպես խոչընդոտ:

Ամփոփելով այս բաժնում ներկայացված արդյունքները և հաշվի առնելով, որ աշխատանքների գնահատման հարցում դասախոսների և ուսանողների կարծիքները հիմնականում համընկնում են, կարող ենք խոսել հետազոտական աշխատանքների գնահատման հաջողված փորձի մասին, և նաև փաստել, որ

- ուսանողներն իսկապես տեղեկացված են եղել գնահատման չափանիշներից և սկզբունքներից,
- հետազոտական աշխատանքի գնահատման չափանիշները հիմնականում ճիշտ են ընտրված,
- գնահատումը կատարվել է ներառելով աշխատանքի իրականացման բոլոր փուլերը:

Այստեղ անուղղակի կերպով երևում է հետևյալ **խնդիրը**, այն է, որ ուսանողները ոչ լիարժեք պատկերացում ունեն գնահատման չափանիշների մասին:

6. Ամփոփում

Ամփոփելով հետազոտական աշխատանքի իրականացման և գնահատման վերաբերյալ դասախոսական և ուսանողական հարցման արդյունքները նշենք, որ ըստ բաժինների վերլուծության ժամանակ անդրադարձ ենք կատարել նկատված խնդիրներին: Հատուկ նշենք, որ այդ խնդիրները կապված են հետազոտական աշխատանքի թե՛ կազմակերպման, թե՛ բովանդակության, և թե՛ գնահատման հետ: Շատ խնդիրներ պայմանավորված են համավարակային սահմանափակումներով: Բովանդակային առումով ուսանողները խնիրների են հանդիպել անհրաժեշտ մասնագիտական գրականության բացակայության պատճառով, աշխատանքների թեմաների և նրանց ծավալների հարցում, աշխատանքի իրականացման ժամանակահատվածի հարցում և այլն:

Հետազոտական աշխատանքների բարելավման նպատակով դասախոսները կատարել են հետևյալ առաջարկները.

1. հետազոտական աշխատանք իրականացնել առաջին կուրսից՝ տարբերակելով աշխատանքի պահանջները,
2. իրականացնել հետազոտական աշխատանքի նախապատրաստական դասընթացներ,
3. աշխատանքը իրականացնել տվյալ առարկայի ծրագրի ավարտից հետո,
4. վերադառնալ կուրսային աշխատանքի ինստիտուտին,
5. հետազոտական աշխատանքի համար տրամադրել առանձին դասընթաց, առանձին կրեդիտով:

Ամփոփելով նշված վերլուծությունը մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինն առաջարկում է.

1. Ամբիոններում քննարկել դասախոսական և ուսանողական հարցումների արդյունքները, մշակել առաջադրված խնդիրների լուծման ճանապարհներ,

2. հետազոտական աշխատանք ղեկավարած դասախոսներին ուսանողների հետ քննարկել խնդիրները՝ հետագայում նման աշխատանք իրականացնելիս այդ խնդիրներից խուսափելու նպատակով,
3. ֆակուլտետներում կազմակերպել հանդիպում-քննարկումներ ուսանողների հետ՝ նոր խնդիրներ վեր հանելու համար,
4. կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնին քննարկել ուսանողների և դասախոսների առաջարկները՝ հետազոտական աշխատանքների կազմակերպման աշխատանքները բարելավելու նպատակով:

Իսկ ՄԿՈԱ բաժինը դիտարկված խնդիրների համար լուծումներ գտնելու նպատակով շահագրգիռ բոլոր կողմերին առաջարկում է կազմակերպել համատեղ հանդիպում-քննարկում ուսանողների, դասախոսների և կազմակերպիչների հետ, առաջարկել որոշ խնդիրների լուծման իր տարբերակները, հետևողական լինել բարձրաձայնված խնդիրների լուծման նկատմամբ:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին